

ՂԱՐԱՐԱՂԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

ԵՐԷԿ ՆՈՐ ՆԻՍՏ ՄԸ ԳՈՒՄԱՐԵՑ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՁ

Ղարարաղի Ինքնավար Մարզի զլխաւոր քաղաք Ստեփանակերտի Գերագոյն Սովետը (խորհրդարան) երէկ նոր նիստ մը գումարեց եւ քննեց Մարզը Հայաստանին կցելու հարցը: Խօսք աւնող բոլոր երեսփոխանները սլահանջեցին Ղարարաղի Մարզին անջատումը Ատրպէյճանէն, որուն հովանիին տակ դրուած է շրջանը կամայական կարգադրութեամբ մը: Խորհրդարանի նիստին միակ օրակարգը Մարզին Ատրպէյճանէն անջատումն էր: Բոլոր երեսփոխաններն ալ անջատումին ի նպաստ արասայատուեցան:

Ստեփանակերտի Ժողովուրդը երէկ եւս դործադուլի մէջ էր եւ համախմբուած էր խորհրդարանի շէնքին շրջակայքը: Գործադուլը աւելի քան ամիսէ մը ի վեր կը շարունակուի, դժուարացնելով շրջանին սլարենաւորումը: Ղարարաղի սլատասխանատուներէն մէկուն հետ հեռաձայնային կապ հաստատելէ ետք, օտար լրատու դործակալութեան մը թղթակիցը կը յայտնէ թէ Ժողովուրդին սլարենաւորումը կ'սլահանուի երկրագործական արտադրութիւններով, որոնցմով հարւատ է Ղարարաղ:

Ղարարաղի բնակիչներէն մին օտար լրատու դործակալութեան մը Մոսկուայի թղթակիցին յայտնած է թէ մի քանի օրէ ի վեր Ստեփանակերտի օդային երթեւեկը կանդ առած է արտաքին աշխարհի հետ իսկ Ղարարաղի Մարզի ցամաքային կապերը Հայաստանի հետ կտրուած են: